

Being the author of historical-saying type Dashtents with his prose was presented as aesthete, who well know described country Sasun and about the talks of their popular names. It is underlined that national traditions, geographical places, sensation, the people views, the protection of nature were different manifested in the work of Khachik Dashtents.

**ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ»-Ն ԵՎ
ՂԱՐԱԲԱՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
XVIII ՂԱՐԱՎԵՐՁԻՆ ԵՎ XIX ՂԱՐԱՍԿԶԲԻՆ**

(սկիզբը նախորդ (թիվ 1, 2010) համարում)

Զինահիդա Առաքելյան-Բալայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու
ԱրՊԳ*

Րաֆֆին անհնարին է գտնում, որ Երեմիա Չասան Ջալալյանը (կաթողիկոս) շարունակած լինի XIII դարում ապրած Գրիգորիս եւ Եղիա վարդապետների (Կիրակոս Գանձակեցին նրանց հիշում է ոչ միայն որպես հավաստի նվիրյալներ, այլեւ՝ գիտուններ) անավարտ պատմությունը¹:

Իսկ ինչո՞ւ չէ: Գուցե, երբ Կիրակոս Գանձակեցին գրում էր յուր երկասիրությունը, այդ ժամանակ տեղյակ չէր նրանց՝ պատմություն գրելու փաստին: Ասողիկը երբ շարադրում է «Պատմիթիւն տիեզերական» գիրքը, ընդգծում է յուր ապրած ժամանակաշրջանի երեւելի հայտնի մարդկանց, սակայն չի նշում Գրիգոր Նարեկացու անունը, որովհետեւ Նարեկացին գոյություն չի՞ ունեցել: Իհարկե, ունեցել է: Պարզապես դեռեւս հայտնի չէր նրա «Մատյան ողբերգություն»-ը, եւ Գր. Նարեկացին դեռեւս մեծ ճանաչում չուներ: Ուրեմն, Ասողիկին մերժենք եւ հավաստի աղբյուր չընդունենք...

Րաֆֆին յուր ծանոթագրության մեջ, շարունակելով ընդհանրացումները Երեմիայի «Ժամանակագրութիւն անցից» պատմության շուրջ, հետեւելով Բեկնազարյանի գրքի մասին ասված՝ «Ղարաբաղում կատարված քաղաքական եւ եկեղեցական պատմություն է, որի մեջ կարգով դրված են եղել բոլոր մեծերի գործերը» բացատրությանը, ասում է. «Երեմիա կաթողիկոս Չասան-Ջալալյանը ինչպե՞ս կարող էր գրել բոլոր մեծերի գործերը, քանի որ վախճանվեցավ 1700թ., իսկ մեծերը

¹ Տե՛ս Րաֆֆի, *Գաղտնիք Ղարաբաղի, Եժ, 10 հատ., տասներորդ հ., Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Րաֆֆի), էջ 479:*

գործում էին մինչեւ 1830 թվականները: Վեհափառը հո չէ՞ր կարող երկնքում պատմագրությամբ պարապվել»¹:

Նախ՝ Երեմիան եւ մեկ այլ ուրիշը չեն կարող հաստատել, թե այսինչ երեւույթը յուր գոյությունը մինչեւ երբ կպահի: Հեղինակը նկատի ունեւր մեկիքների պատմական գոյությունը՝ մինչեւ Երեմիայի ապրած ժամանակաշրջանը²: Եվ ապա, Երեմիա կաթողիկոսի մահը նույնպէս Րաֆֆին սխալ է նշում՝ 1700 թվական: Ո՛չ, կաթողիկոսը մահացել է 1702թ.³, որի փոխարեն աթոռակալել է Եսայի Հասան Ջալալյանը:

Մեկիքություններն իշխանական-նախարարական տների փոխարեն առաջ եկած քաղաքական-պատմական միավորներ էին, որոնք ավելի կանոնիկ կարգով երեւացին Շահ Աբասի ժամանակներից՝ 1600-ական թվականներից սկսած:

Րաֆֆին հերքում է նաեւ Եսայի կաթողիկոսի «Յարաբերութիւն Հայոց ընդ Ռուսաց» գրքին վերաբերող «Գաղտնիք»-ի հեղինակի հետեւյալ մեկնումը՝ կապված Եսայու մահվան փաստի հետ. գրքի «մեջ ժամանակագրական կարգաւ զետեղուած են ռճիղ (1727) ցարդ Հայոց կաթողիկոսներից և մեկիքներից Ռուսաց կառավարութեան և սոյն կառավարութիւնից հայ կաթողիկոսներին և մեկիքներին գրուած բոլոր պաշտօնական գրութեանց պատճեններն»⁴:

Գուցե հետեւելով Սիմեոն Երեւանցու՝ Եսայի կաթողիկոսի մահվան մասին հաղորդած սխալ (1726թ.) փաստին, ինքը եւս ընդունում է նույն այդ տարեթիվը՝ 1726, գտնելով, որ «Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը վախճանվեցավ 1726թ., ինչպէ՞ս կարող էր գրել նա՝ սկսեալ 1727 թվականից հայոց մեկիքների՝ ռուսաց հետ ունեցած հարաբերությանց գործերը»⁵: Ահա այս կերպ է Րաֆֆին նման եզրահանգման եկել:

Այդ պաշտոնագրությունները երկուստեք փաստվում են 1700-ական թվականներից սկսած: Իսկ Եսային յուր հայրապետական աթոռին գահակալելուց՝ 1702 թվականից սկսած, լծվեց այդ սուրբ գործին:

Սակայն Եսային վախճանվել է 1728թ.: Փաստը հաստատում է կաթողիկոսի դամբանագիրը. «Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից, որ

¹ Նույն տեղում, էջ 479, տես Բէկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886 (այսուհետեւ՝ Բէկնազարեանց Ա.), էջ 90:

² Տես Բէկնազարեանց Ա, էջ 90-95:

³ Տես Ուլուբաբյան Բ., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ նշակույթը, Երեւան, 1998, էջ 208-215, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, Երեւան, 1977, էջ 523-524:

⁴ Րաֆֆի, էջ 479, տես Բէկնազարեանց Ա, էջ 90:

⁵ Նույն տեղում, էջ 479, տես Բէկնազարեանց Ա., էջ 90:

է ազգէն Ջալալ Դօլին: ՌճԷ: թուին»¹: Բեկնագարյանը, սակայն, հայոց թվարկությամբ թվագրում է՝ ՌճԾԷ: Այս կերպ են փաստում նաեւ Բագրատ Ուլուբաբյանը եւ այլ ուսումնասիրողներ: Նշանակում է՝ «Գաղտնիք»-ի վերոհիշյալ փաստը (Եսայի կաթողիկոսի մահվանը (1727) առնչվող)՝ 1728 թվականը, ճիշտ է դիտված:

Ա. Բեկնագարյանը շարունակում է թվարկել այլ գրվածքներ եւս: Դրանցից են. Դիզակի Գոտիչ վանքի միաբան եւ վանահայր Վարդան վարդապետի «Պատմութիւն մելիքաց Դիզակի և Վարանդի», «Դիւցազնական քաջագործութիւնք մելիքաց», «Ծագումն Փանահ ճըռ-խամի եւ ճըռ-մելիք Սիրզախամի», «Իսրայէլ ճըռ-կաթողիկոս և գործք իւր», Եղիա վարդապետի (Ամարասի միաբան) «Սահմանք հայ մելիքաց» (մելիքների տոհմական տարածքների պատմությունը՝ Փոքր եւ Մեծ Սյունիքների ընդգրկմամբ), Դեւոնդ վարդապետի (Սուրբ Դեւոնդ (Ավետարանոց մելիքանիստի մոտերքը) անապատի վանահայր) «Մելիք Շահնագար Երրորդ» անվանյալ ձեռագիրը, որում զետեղված են Վարանդայի մելիքության տոհմական ծագումնաբանական պատմությունն ընդգրկող ձեռագիր գրքերը, որոնց մեծ մասին ժողովուրդը դեռեւս տեղյակ չէր եւ որոնց ոչնչացման նախանձախնդիրներն անօրեն մելիքներն էին ու երկպառակություն սերմանողները, որպեսզի նրանց մասին գրված պատմություններն անհայտ մնան հետագա սերունդներին²: Իսկ Րաֆֆին հեզնում է այս մասին՝ ասելով. «Տեսն՞ում եք որքա՛ն առատություն... Ղարաբաղը որքա՛ն հարուստ է եղել իր պատմագիրներով և պատմություններով»³: Անշուշտ, եղել են պատմություններ հորինողներ, գրի առնողներ..., որոնք հիմնականում Գանձասարի, Ամարասի, Դեւոնդի, Ավետարանոցի եկեղեցիների միաբաններից, շնորհալի այրերից, ասացողներից էին:

Վերջ չկային ժանտ Իբրահիմի հանցագործություններին, խարդախություններին՝ դիմադիր լինելու մերթ պարսից շահերից եկող սարսափներին (քանզի վերջինս անօրեն խանության պաշտոն ուներ), մերթ ռուսների հնարավոր հայտնվելուն, մերթ վրիժառու հայ հայրենասեր միաբան մելիքներին եւ քաջ զինվորյալներին (որոնք մելիքների հանձնարարությամբ կային) ու մերթ էլ՝ ժողովրդի ահագնացող ատելությանը⁴:

Հաճախ նա, այդ ամենից ձերբազատ, դիմում էր չտեսնված, չլսված չարագործությունների, քաղաքական խարդախ ու ճկուն խաղերի, խորամանկությունների...

¹ Ուլուբաբյան Բ., Գանձասար, Երեւան, 1981, էջ 144, տես Ուլուբաբյան Բ., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, էջ 211, տես Բէկնագարեանց Ա., էջ 47:

² Տե՛ս Բէկնագարեանց Ա., էջ 89-92:

³ Րաֆֆի, էջ 480:

⁴ Տե՛ս Բէկնագարեանց Ա., էջ 92-96:

Չեղինակը մեկնում է անխոնջ ու նվիրյալ, հայրենասեր մեծիքների՝ Մելիք Մեջլումի եւ Մելիք Աբովի մաքառումները՝ հուսո դուռ բանալու, նրանց հանձնարարությամբ զորագնդերի աչալուրջ գործողությունները վերահսկելու ծրագրերը:

«Գաղտնիք»-ի առաջին մասի պատմության շարադրողը հաճախ Աբրահամ Բեկնազարյանն է, որը Ղարաբաղի պատմության ամենատեսակի ժամանակաշրջանը համարում է 1787-1794 թվականները, արյունալի մի ընթացք, որն ասպարեզ բացեց ոչ միայն հերոսական մեծիքական գնդերի, այլ նաեւ աշխարհագրայինների կամավոր գնդերի, ուխտապահ երիտասարդական խմբերի ձեւավորման ու ակտիվ գործունեության համար: Բաֆֆին պնդում է, որ «Գաղտնիք»-ի մեջ ժողովուրդը չի գործում, ինչը ենթակա է հերքման: «Հայ ժողովուրդն, որ աչօք տեսած էր իւր Հայրենեաց ներքին աւերումն...,- հեղինակը թվարկում է բոլոր արհավիրքները, որոնց ականատես եղավ Ղարաբաղը,- ոգևորուեցաւ համասիրտ և համական միաբանութեամբ, կտրեց իւր յոյսը օտարներից, խարսխեց իւր ուժի վերայ իւր յոյսը և սկսաւ գործել հրաշքներ: Կիւլստանի ծերունիներն և պատանիներն, կալերը կասելը ընտանեաց և տղայոց թողլով՝ առին զէնքերը և միացան Չափար-Սարասարի զօրաբաժնին, Ջրաբերդիին՝ Տեօնմագի զօրաբաժնին հետ, Խաչենիին՝ Քեօթօղլուն և Վարանդի ու Դիզակի ուխտապահ երիտասարդներն՝ մեր զօրաբաժնին, ճրռերից ծածուկ: «Սրբենք, սրբենք մեր սուրբ Հայրենիք պիղծ ճրռերից», -այս խօսքերն յեղյեղում էր յաճախ ոգևորուած ծերոց մէջ»¹:

Հայոց մեծիքների հանձնարարությամբ գործող քաջերի (Դելի-Մահրասա, Քյոթօղլի Քեշիշ, Թուլի Արզուման), ժողովրդական հերոսների հանդգնությունները, սխրանքները² կատաղեցնում էին Իբրահիմին, սակայն նրա գաղտնի հրամաններն՝ ընդդէմ մեծիքների միաբանության, իսկույն լրտեսվում եւ ի տեղի էին հայտնվում Կաքել Չաքու եւ Շեյթան Թունուջանքերով: Դեպի Թիֆլիս ուղեւորված Մելիք Մեջլումի եւ Մելիք Աբովի հուսացումները՝ նամակագրություն սկսել Եկատերինա Բ կայսրուհու հետ լրտեսվեցին Իբրահիմի մարդկանց կողմից, եւ նա նամակով մեծ վարձատրություն խոստացավ վրաց արքա Չերակլին, եթե վերջինս կալանավորեր մեծիքներին եւ ետ՝ Շուշի Իբրահիմին ուղարկեր...

Կաքել Չաքուն ուղարկում են Թիֆլիս՝ Չերակլի հնարավոր դավադրությունից (որը եւ կատարվում է) զգուշացնելու Մելիք Մեջլումին եւ Մելիք Աբովին...

¹ Նույն տեղում, էջ 96:

² Տե՛ս նույն տեղում, էջ 95-100:

Մելիք Շահնագարի զվարճաբան Պըլը-Պուղու օգնությամբ Շեյթան թուևին զգեստափոխվելով, ներկա է գտնվում Շուշիում Իբրահիմի եւ Իսրայել անօրեն (ճըռ-ջըռ) կաթողիկոսի միջեւ տեղի ունեցող խորհրդին՝ որպես մելիք Շահնագար, որտեղ ընթերցվում է Գանձակի Ջաֆար բեկի ուղարկած նամակը, որում տեղյակ էր պահվում Թիֆլիս մեկնած մելիքների՝ Գանձակի Ջավադ խանի հետ կնքած որոշումների մասին:

Հավաքվածները որոշում են կայացնում՝ Շուշի փոխադրել եւ մահաթույնով վերացնել Գանձակում նստած Սարգիս եպիսկոպոսին, բռնագրավել գաղտնի փաստաթղթերը եւ Թիֆլիսից ուղարկված մելիքներին մահաթույն խմեցնել եւ այլն, եւ այլն:

Իբրահիմի բուրո գաղտնի հրամաններն ի դերեւ են ելնում, քանզի Շեյթան թուևին ամենայն բան հայտնի է դարձնում զորախմբերի հրամանատարներին...¹:

Իբրահիմի կերպարային ընդգծումները լավագույնս ցուցված են «Գաղտնիք»-ում, եւ այդ ընթացքի դրությամբ նա հուսաբեկ ու անօգուտ գործողություններ էր կատարում՝ կատաղած ու հուսահատված վերը դիտված քաջերի արագաշատ սրահարություններից՝ հանդեպ յուր վարձու զորաց ու լրտեսների:

Հայոց քաջերը «ուժաթափ անելու հեռատեսութեամբ», ի տեղի, զորական եւ դատական արագաշարժ որոշումներ էին կայացնում եւ կատարում, կռվում, հաղթում, անօրեններին պատժում... Ահա դրանցից. «...Հինգերորդ՝ կամեցանք պատժել և ամենայնցաւոր Մելիք-Շահնագար Գ-ը, որն ի սէր Իսրայել ճըռ-կաթողիկոսի նորոգած էր Ամարասի վանուց պարիսպը, որպէս թէ քաւելու իւր անթողլի մեղքերը և հիւանդ էր: Բայց բարուք համարուեցաւ՝ Շեյթանի ձեռնով նախ իմանալ նորա դրութիւնը...»:

Շեյթան թուևին՝ որպես եպիսկոպոս, եւ Պըլը-Պուղին՝ որպես սարկավագ, շրջում էին ամենուր, նաեւ հայ զորաց մեջ՝ գովաբանելով նրանց ըստ ամենայնի...

Արժաթասեր Պել Ջամալը զգեստափոխված թուևուն անվանեց «Սարգիս-Պուխարեցի», իսկ Պըլը-Պուղուն՝ «Ճըռ-Սարկաւագ»:

Մելիք Շահնագարի նշանավոր ու տաղանդաշատ զվարճաբանին, թերեւս, միմիայն այդ տեսանկյունից գիտեինք: Պարզվում է՝ նա եղել է Ղարաբաղի քաղաքական ու ռազմական գաղտնի անցքերի ակտիվ ակադատեսն ու մասնակիցը:

Շեյթան թուևին Դիզակում եւ Վարանդայում քարոզում էր որպես Երուսաղեմի նվիրակ քարոզիչ՝ զորք չտալ անօրեն Իբրահիմին, այլ մնալ

¹ Տես նույն տեղում, էջ 100-107:

հավատարիմ հարազատ մելիքներին...», «Ղարաբաղի քաջահամբաւ հայ տղամարդութեան»:

Հետաքրքիր տեղեկություն է տրված պատմության մեջ երբեմնի հայրենասիրության հրաշակերտի (Լեոն)՝ Ավետարանոցի քաջահաղթ իշխան Յյուսեփինի ապաշխարում ստացած որդու՝ մահամերձ Մելիք Շահնազարի մասին. «Աւետարանոց աւանում Շէթան-եպիսկոպոսին խոստովանում է Մելիք-Շահնազար Գ-ն իւր բոլոր մեղքերը, սուրբ Երուսաղէմին նուիրում հինգ հազար թուման դրամ (15000 ռուբլի) և Շէթանին՝ հարիւր թուման, և ապա վախճանում ամի (1791) թուին: Մելիք-Շահնազարն երկար ժամանակ հիւանդութեամբ ծառայում է անկողնոյ, որի մահից անմիջապէս յետոյ Շէթանն, առնելով դրամները՝ հեծնում է վախճանուած մելիքից շնորհուած ձին և հեռանում Աւետարանոցից:

Պըլը-Պուղին (Խենթ Պողոս) դարձաւ իւր աշխարհական հագուստով. իսկ հինգ հազար թումանն ղրկուեցաւ ժողովի որոշմամբ Սարգիս սրբազանին, որ պահէր պիտոյից համար»¹: Ահա եւ Վարանդայի մեծ մելիքն այս կերպ փորձում է թեթեւացնել յուր գործած մեղքը՝ յուր ժողովրդին սատարելուն մղվելով...

1794 թվականին, ըստ «Գաղտնիք»-ի մեկնաբանման, Իբրահիմը «ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի բանտարկեալ սարսափահար գերի:

Ճըռ-խանն անձնական զինարան և վառօդարան չունէր, այլ ամեն ինչ գնում էր Հայերից թանկ գնով. բայց այդ միջոցում արգելուած էր ո՛չ գէնթ ծախել ճըռ-խանի վերայ եւ ո՛չ գնդակ ու վառօդ»:

Հետաքրքիր է հայ քաջերի սպառնալիքը Իբրահիմին. «...եթէ կը յանդգնիս այսուհետև չափիցդ դուրս գալ՝ շուտով կուտես գիշերապահներիդ հացիցը, այն ինքն է՝ կը սպանուիս նոցա պէս: Մենք կարող էինք սպանել զքեզ. մեր ճանկումն էիր. ուրի՛շ անգամ կը տեսնուինք, եթէ չես ուղղուիր. Ազրայէլ-Իբրահիմ, Նէառաւտօվ-Աթա, Տէօվ-Գեսպար»²: Բայց անհասկանալի է՝ ո՞ր օրվան էին թողնում զազանի սպանությունը հայ քաջերը. անհասկանալի եւ աններելի անմտություն:

Հարկ է նշել, որ Մելիք Մեջլումը եւ Մելիք Աբովը Թիֆլիսում Ղարաբաղի ազատության համար նամակ գրեցին Ռուսաց Եկատերինա (Կատարինե) Բ կայսրուհուն՝ այն հատուկ թղթատարով ուղարկելով Հովսեփ եպիսկոպոս Արղությանին՝ մատուցելու թագուհուն...

Իսկ Թիֆլիսում Հերակլը հայոց մելիքներին (ընդունելության ժամանակ) ցանկանում է կալանավորել, սակայն զգուշացված մելիքները

¹Նույն տեղում, էջ 107-108:

²Նույն տեղում, էջ 110:

պաշտպանվում եւ խույս են տալիս պալատից՝ նգովք շնջալով նրա հասցեին... Այս մասին լսելով՝ Աղա Մահմեդ շահը նամակով հայտնում է, որ արշավելու եւ պատժելու է թե՛ Իբրահիմին, թե՛ Յերակլին... եւ թե՛ ազատ է արձակելու Մելիք Բախտամին...¹ :

Պատմության մեջ ժամանակագրությամբ (1794) փաստագրված է Գանձակում Սարգիս եպիսկոպոսին կաթողիկոս օժելու արարողությունը, որտեղ ներկա էին աշխարհիկ եւ հոգեւոր բարձրաստիճան այրեր... Ժողովուրդը Սարգսին յուր քաջապինդ արիության համար անվանում է «կենդանի նահատակ»։ Եկողների շարքում էր Դանիել բեկի որդի դպիր Բաղդասարը (հետագայում՝ Բաղդասար մետրոպոլիտ - Ձ. Ա.- Բ.):

Օժմանը ներկա էին հինգ եպիսկոպոս եւ վեց վարդապետ։ Տասներկու վարդապետների շարքն ըստ ավագության լրացնում էր հայերի բարեկամ՝ Գանձակի Ջավադ խանը։ Հանդեսին ներկա էր նաեւ հանգուցյալ Մելիք Շահնազարի անդրանիկ որդին, որն ըստ օրենքի՝ պետք է ժառանգեր մելիքության պաշտոնը։

Ջումշուդ բեկը ծնված էր Մելիք Շահնազարի օրինավոր կնոջից՝ Դիզակի Մելիք Եսայու Սոնա դուստրից։ Վերջինից էր ծնված նաեւ Հուրիզադը, որին հայրը կնության տվեց Իբրահիմին... Մելիք Շահնազարը այլակրոն կին էլ ուներ, որից ծնված որդին կոչվում էր Յյուսեին բեկ։

Աղա Մահմեդ շահի հրովարտակով Ջումշուդ բեկը հաջորդեց հորը։ Սակայն Իբրահիմը ցանկացավ անօրեն մելիքություն ստեղծել եւ Ջումշուդի փոխարեն մելիք նշանակել (հակառակ կնոջ՝ Հուրիզադի խնդրանքի) Յյուսեին բեկին՝ նրան անվանելով Մելիք Յյուսեին Բ։ Սակայն քաջ պապի՝ Մելիք Յյուսեինի եւ նույնքան քաջ մորեղբոր՝ Մելիք Եսայու քաջությունը ժառանգած Մելիք Ջումշուդը սպանեց անօրեն եւ անհամամայր Մելիք Յյուսեինին ու տիրացավ իր պատկանելիքին՝ Վարանդայի մելիքությամբ։ «Այդ օրից սկսեալ Մելիք-Ջումշուտն անհաշտ թշնամի եղաւ Իբրահիմ ճըռխանի տան հետ և սերտ բարեկամ հարազատ-մելիքաց»²։

Քաղաքական կարեւոր արժեք է ներկայացնում Դիզակի մելիքագուն Աբաս բեկի, Գյուլիստանի Մելիք Աբով Գ-ի, Ջրաբերդի Մելիք Մեջլումի, Խաչենի Ջալալյան իշխանագունների եւ Վարանդայի Մելիք Ջումշուդի անխախտ միաբանությունը³։

Քաղաքական հանգամանքներից ելնելով՝ մելիքները հաստատեցին մի շարժական գաղթականություն. Մելիք Աբով Գ-ն յուր ժողովրդով գնաց

¹ Տես նույն տեղում, էջ 112-113։

² Նույն տեղում, էջ 115։

³ Տես նույն տեղում, էջ 115-116։

Բորչալու (Թիֆլիսին մոտ), Ջրաբերդի ժողովուրդը Գանձակի մոտ գտնվող Շամբոր լեռնամասը գնաց, Մելիք Մեջլումը մնաց Գանձակում, իսկ Վարանդայի ժողովրդի եւ զորքի մի մասը Մելիք Ջումշուդի հետ գաղթեց Լոռի գավառը:

Սարգիս կաթողիկոսը յուր միաբանության կես մասով գաղթեց Սահահինի վանքը: Հայերին գաղթեցնելու նպատակն այն էր, «որպէս զի թէ մօտ լինէին միանալ Ռուսաց գալիք զօրքին և թէ՛ ի մօտուստ նամակագրութեամբ յարաբերութիւն ունենալ Ռուսաց կառավարութեան հետ՝ մանաւանդ թէ կար և մի գաղտնի նպատակ... Ծանր էր ժողովրդեան հեռանալ հայրենիքից, բայց ծանրագոյն էր բաժանուիլ իւր սիրած կաթողիկոսից և հարազատ-մելիքներից»: Կռվող քաջերը ժողովրդի մնացյալ մասով մնացին հայրենիքում՝ հայտնելով. «Սիրելի՛ մելիքներ, Ղարաբաղի մայրական սերն չթողուր զմեզ գաղթել օտար երկրի խորթ գիրկն... Մնաք բարեաւ և դուք, հայ զօրականք, որ պաշտպանեցիք ձեր ծնող Հայրենիքը և այժմ բաժանվում էք նորա գրկից»¹:

Հեղինակը հետադարձ հայացքով քննում է այն փաստը, թե ինչու Ջրաբերդի մելիքության հպատակ գյուղացիք գաղթեցին եւ օձաբնի՝ Շուշիի մոտիկությամբ բնակություն հաստատեցին Խաչենի հարավային մասում: Դրանք Ջրաբերդի Մելիք Իսրայելյան Մելիք Ադամի ընտիր զորքերից էին, որոնք միշտ էլ քանդում էին Իբրահիմի բոլոր ձեռնարկումները: «Գաղտնիք»-ի տված տեղեկությունները եւս հարցի կապակցությամբ Ռաֆֆին հերքում է յուր համար ընդունելի ոգով, որն, անշուշտ, մնացյալ հերքումների շարունակությունն է... Իբրահիմի խարդախությամբ, Մելիք Շահնազարի միջամտությամբ կազմվում է պայմանագիր տարբեր կետերով՝ ի շահ քաջերի, եւ երբ այդ մասին հայտնվում է Մելիք Ադամին, վերջինս շատ է ուրախանում. «...Դուք, քաջեր, այս տեղափոխութեամբ ամենամեծ ծառայութիւն անելու էք Ղարաբաղի Հայոց. այս է, դուք Շուշու մօտ բնակելով կարող էք ի մօտուստ գաղտնի հսկել ճրճ-խանի բոլոր շարժմանց վերայ, ծանօթանալ Շուշու կրճերին և ծակուծուկին և ամեն ինչ յայտնել հարազատ-մելիքներին... Իսկ ձեզ, քաջեր, կտակում եմ իմ քաջութիւնը, հայրենասիրութիւնը և ազգասիրութիւնը, զձեզ յանձնում եմ Աստուծոյ և իմ Մեծլում-բէկը ձեզ»²:

«Գաղտնիք»-ի հեղինակը ցույց է տալիս, որ այն հիմնական պատճառները, որոնք Մելիք Ադամի քաջ զորականներին ստիպեցին ընդունել ժանտ Իբրահիմի պայմանները, հաստատված որոշումով Մելիք Շահնազար Գ-ն հանձնեց նրանց: Իսկ հարկը, որ ստիպեց քաջ զորականներին

¹ Նույն տեղում, էջ 116:

² Նույն տեղում, էջ 118:

թողնել երբեմնի Վաչագան Բարեպաշտ արքայի սիրելի դստեր Խնչիկի պատվին շինված յուրյանց Դաստակերտը եւ գաղթել Խաչեն, լուրջ էր եւ քաղաքական. «Ճըռ-խանի զօրանալն, ճըռ-մելիքների բազմանալն, հարազատ-մելիքների երկպառակութիւնն, գաղտնի դաւադրութիւնն: Քաջերն առերես յայտնեցին որպէս թէ ինքեանք ձանձրացած էին երկարատև պատերազմներից, իսկ իւրեանց բուն նպատակն էր գաղտնի փշրել բոլոր ճըռների ամեն ձեռնարկութիւնները»¹:

Այսպիսով, նրանց ամրացած ենք տեսնում Բալլուջա եւ Խնածախ գյուղերի տեղերում, Շուշի բերդ-ամրոց քաղաքի մոտերքում՝ երկու ժամապահեռավորությամբ:

Ըստ պատմության տված տեղեկության՝ «Պալլուճան առաջ կոչւում էր «Մեծ Խմհատ», իսկ Խնածախն՝ «Փոքր Խմհատ», որ նշանակում է՝ անտառից կտրված. «Պալլուճա անուանակոչութիւնն ծագած է Ղարախան իւզպաշու «Պալլու» տատի անունից, որ յաճախ գործ էր ածում «ճան» բառը ամեն խօսողի հետ: Սոյն երկու բառերի միաւորութիւնից ծագած է Պալլուճան անունն: Շատ չանցած՝ Փոքր-Խմհատ անունն ևս տեղի տուաւ Խնածախ անուան»²:

Սակայն Իբրահիմն զգալով, որ Մելիք Ադամի քաջերը գործում են ոչ յուր օգտին եւ սպանում են թե՛ յուր լրտեսներին, թե՛ սուրհանդակներին ու զորքերին, սկսեց նրանցից էլ առնել զորադրամ-գլխահարկ եւ բնաջնջել այդ երկու գյուղերը, մինչդեռ Րաֆֆին քանահրանքով է խոսում այդ ամենի մասին՝ ողորմելի գյուղեր անվանելով դրանք, եւ որոնց ջնջմանը հետամուտ է Իբրահիմը: Ձավէ՞ շտ է... Ո՛չ. պատմական իրողություն:

Իբրահիմի գնդերը (նույնիսկ փոխառած) ջնջվում էին եւ պատուհասվում ժողովրդական հերոսներից: Այդ գնդերից վերջինի գնդապետին քաջերից Շահմար Ղավալը այսպես պատվիրեց. «Քեզ դրկող ճըռ-խանին կասես. ճըռ-խան, դու Պարսկաստանից հայ գլուխ բերած չես, որ մեզանից գլխահարկ ես պահանջում. մի կտոր շալեղ անգամ չտար Շահմար-Ղաւալն, որ աչքդ զցես: Դո՛ւ հետապնդեցիր հիմնայատակ կործանել Պալլուճան և Խնածախը, բայց ջնջել տուիր քո երեք հազար զօրքը»: ճըռխանը զոչւում է զարմացած. «Աճապա՛, քեաֆո՛ւր. Շահմար-Ղաւալ հեջ վերմագ խանա զէկ»: Այնուհետեւ այս գիւղի անունն թուրքերէն կոչուեցաւ «Խանազէյ», իսկ հայերէն՝ «Խանածախ», կրճատուածն՝ Խնածախ»³:

Իբրահիմը հուսահատ՝ Մելիք Շահնագարից խորհուրդ է հարցնում: Իսկ երբեմնի քաջագույն ու անխախտ հայրենասեր, Վարանդայի զարմանահրաշ Մելիք Յիւսէիմի որդին՝ Մելիք Շահնագար Բ-ն (բնագրում՝ Գ-ն) ասում է. «Խնածախի և Պալլուճի քաջերն այնքան համամիտ, համակամ, յանդուզն և արիւնարբու հրէշներ են, մինչև անգամ թռչուններն սար-

¹ Սոյն տեղում, էջ 120:

² Սոյն տեղում, էջ 121-122:

³ Սոյն տեղում, էջ 122:

սափից չեն թռչում դոցա օդում և գիշատիչ գազաններն չեն համարձակում անցուդարձ անել դոցա անուղի անտառներով (իսկ չէ՞ որ վիպերգուները վիպում են, որ հենց քաջագուն մելիք Յուսեփին օրոք թշնամիները չէին համարձակվում մոտենալ չնաշխարհիկ եւ անկրկնելի, վաղնջական Վարանդա երկրին ու նրա հզոր և ոգեղեն բաբախյունով սրտին «հայրենասիրության հանդիսարան» (Լեո) հանդիսացող արքեմի Ավետարանոցին): Մի ամենամեծ սխալ գործեցինք այդ հրեշները՝ Ջրաբերդից փոխադրելով այդ մարդածախ որջերն: Առածն ասում է. «Կաքաւի ձուկից ելած ձագն հաւ թուխսկանի կրթկրթոցին ականջ չդներ»¹:

Իբրահիմը այսուհետ ո՛չ գաղտնի, ո՛չ բացորոշ չէր փորձում հարձակվել քաջերի բներին եւ Մելիք Շահնագարի խոսքերին փորձում էր հետեւել՝ սպասելով մի հարմար պահի, որը կարծես ուշանում էր, քանզի նույնիսկ յուր աներ Օմար խանը չէր ուղարկում օգնական զորագունդ... Իբրահիմի այս դրությունը Աղա Մահմեդ շահի արշավանքի նախօրեին էր. «Վերջապէս փշրուած էր ճրռ-խանի զօրութիւնն, Ղարաբաղից Պարսկաստան փախած էին և տակաւին փախչում էին կոտորածներից ազատ մնացած թափառական Մահմետականներն և այլ ևս Շուշի ելանուտ չէին անում ճրռ-կաթողիկոսն և ճրռ-մելիքն: Ամենուստեք ուժաթափ էր ճրռ-խանն և մերթ ընդ մերթ լսուում էր Աղա-Մամատ-Շահի Ղարաբաղ արշաւելու գուժն»²:

Ռուսների արշավանքի լուրն էլ մյուս կողմից՝ Իբրահիմին դրել էր երկու հնարավոր սրերի արանքում:

Իբրահիմը կատարեց հուսահատական մի քանի քայլ եւ առաջին անգամ (իրեն զորացնելու նպատակով) Կուր գետի աջ ափից ստիպողաբար թափառական ցեղեր փոխադրեց Թարթառի ձորը, իսկ Աղդամից թուրք ցեղախումբ՝ Շուշի եւ այլն... Այդ ցեղախմբերը, ըստ պատմության տեղեկությունների, 1820 թվականից սկսած, մեծ վնասներ են հասցրել թե՛ հայերին, թե՛ ռուսներին...

Իբրահիմի ստիպմամբ առերես մահմեդականություն ընդունած Պել Ջամալը («Չայ մարդ») խանի խորհրդականը, մելիքներին, ուխտապահներին հաղորդում է նրա մտադրությունները, եւ Ավետարանոց վերադարձած Մելիք Ջումշուդը եւ մելիքագն Աբաս բեկը, վերջինիս հորեղբայր Ավան բեկը Չագարի գետի ձախ կողմի մահմեդականներին ցրում են, կոտորում, գերում շատերին, Քյորոզլիկ Թուլի Արզումանի եւ Դելի Մահրասանի հետ Թարթառի ձորակը «մաքրեցին», իսկ մի այլ քաջերի խումբ Կարկառ գետակի ակունքները սանրեց...³ :

¹ Նույն տեղում, էջ 122:

² Նույն տեղում, էջ 123:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 124-125:

Երկասիրության միջով կարմիր թելի պես անցնում են հայ շինական տարրի, զինվորականության, հարազատ ու անհարազատ մեկիքությունների տնտեսական, շինարարական, զինական, գյուղական կյանքի պատկերները: Ջուզահեռ գծվում են օտարերկրյա քաղաքական ու ռազմական շահագրգռությունները, վտանգները:

ԺԳ գլուխը ներկայացնում է պատմագիտական հետաքրքիր տեղեկություններ թե՛ Իբրահիմ խանի գործադրած սարսափելի միջոցների, թե՛ հայ հարազատ մեկիքների փոխհարաբերությունների, թե՛ անօրեն, կենտրոնախույս մեկիքների գործունեության շրջանակների շուրջ՝ Աղա Մահմեդ շահի արշավանքների՝ 1795-ական թվականների նախօրյակին...

Միաժամանակ ցույց են տրված Արցախի մեկիքների գործադրած հնարավոր զգուշացումները, մշակած ծրագրերը, դիվանագիտական, հայրենասիրական, պատերազմական հնարավոր իրադարձությունների քննումը, դրանց մասնակից լինելու կարելու ված փաստը, ռուսների՝ ռուսաց ինքնակալությունից քաղաքական հուսացումները (լինել պարսի՞ց, թե՞ ռուսաց հետ) եւ այլն: Ուսումնասիրության մեջ դեպքերի հետադարձ թվարկումով խոսվում եւ գնահատություն է տրվում հայ գաղթական տարրին, հատկապես՝ նախկինում Գանձասարի միաբան, պատմագիր, եպիսկոպոս Մելիքսեթի գործադրած նպատակին ու ջանքերին՝ յուր հոտը փրկելու եւ նրան օգտակար լինելու վերաբերյալ, հատկապես մեծ սուրգունի (գաղթի - Ջ. Ա.-Բ.) մասին պարսից Շահ Աբաս Մեծի վարած արտաքննապես «մեղմ, բարի» քաղաքականությունը (իր հպատակ ժողովուրդների՝ այդ թվում նաեւ հայերի վերաբերյալ) ընդգծելով¹:

Ինչպես շատ ու շատ բռնակալների կազմակերպած գաղթերին, այնպես էլ Շահ Աբաս Մեծի կողմից կազմակերպված պատմական այդ մեծ աղետին, նրա վարած ծանր ու խորամանկ քաղաքականությանը վերաբերող հայ եւ օտար պատմական աղբյուրները տարակարծիք են: Պատմիչներ Ջ. Սարկավազը, Գր. Դարանաղջին, Ա. Դավրիժեցին եւ ուրիշներ այլեւայլ գնահատություններ են տվել հայ ժողովրդին հասած մեծ պատուհասին՝ շահաբասյան արշավանքներին, գաղթին ու շահի վարած երկդիմի քաղաքականությանը: «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության մեջ եւս խոսվում է պատմական այս ծանր իրադարձությունների շուրջ: Դեղինակը որպես սկզբնաղբյուր մատնանշում է ձեռագիր «Գաղթականութիւնն Հայոց ի Պարսս» ուսումնասիրությունը:

«Շահ-Աբասն այս բոլոր բարութիւնը արած է ոչ եթէ առաքինութիւն գործած լինելու նպատակաւ՝ այլ այսպիսի հռչակաւոր բարերարութեամբ,

¹ Տես նույն տեղում, էջ 129-139:

գթասիրտ հիւրընկալութեամբ, պատուասէր մեծարանօք և կրօնական ազատութիւն տալով առ ինքն քաշել դրացի երկիրների ազգերը, թշնամեաց երկիրները դատարկելու և իւր երկիրը բազմամարդութեամբ լցնելու հեռատես քաղաքականութեամբ:- Շահ Աբաս Մեծի բազմադիմի հղացումները մահացու կերպով հպատակեցրին հայերին ու հրեաներին, ասորիներին, վրացիներին, Աղվանից ժողովուրդներին, որոնք նեղվել էին թուրքերից, ջալալիներից, պարսիկներից եւ որոնք,- շլացած շահի նենգ բարեսրտութեամբ եւ կեղծ հիւրասիրութեամբ»¹, - ուղղակի եւ անուղղակի կերպով ցուցված է մեծ աշխարհակալների դարավոր մահացու, նենգավոր մտազարուքունը՝ ծծել ազգերի արյունատար երակը, քաղել նրանց հանճարի ցոլանքները, ոչնչացնել նրանց ազգային դեմքը, խլել ու հեռուն շարտել նրանց հոգուց եւ մտքերից ազատության տենչը, վսեմականը...

Նադիր շահ, Շահ Աբաս Մեծ, Շահ Աբաս Բ, Աղա Մահմեդ շահ, Աբաս Միրզա եւ այլ գահակալներ, ռուսաց կայսրեր, որոնք հաճախ եղել են հայ մելիքների, իշխան նախարարների, հայ ժողովրդի մե՛րթ դահիճները, մե՛րթ բարերարները, մե՛րթ հայ շնորհաշատ քաջարի մելիքների նվիրածութունը, հերոսութունն ու շնորհը, հյուրասիրութունը առատ վարձատրողները կամ ուրացողները եւ այլն, եւ այլն:

Այս եւ նման հետաքրքիր ու արժեքավոր պատմական տեղեկութայններ են ամփոփված «Գաղտնիք Ղարաբաղի»-ում, որոնք հաճախ շարահարված են հետադարձ պատմական իրադարձութայններով:

Յեղիմակը, խոսելով նաեւ հայրենիք վերադարձող՝ Աղվանից երկրի գաղթածների մասին, որը հաջողեցրել էր պատմագիր Մելիքսեթ եպիսկոպոսը, նշում է, որ գաղթածներից միայն չվերադարձավ յուր «պապ Մելիք-Յայկազնը... Պատճառն այս անընդհատ հաւատարմութիւն է, որ յաջորդող շահերն բարձր պաշտօնների մէջ ընդունում են մեր տոհմի զաւակները, որք առհասարակ կոչւում են Մելիք-Յայկազեանց ազգանուամբ»²: Վերջինս օսմանցի թուրքերի վայրագութայնների պատճառով թողել էր «իւր հայրենիք Քշտաղի Խնածախ գիւղը և (1586թ.) սեպտ. գաղթել Պարսկաստան»³:

Գաղթում են միաժամանակ մելիքներից շատ-շատերը եւ ժողովրդի որոշ մասը եւս:

Անշուշտ, Մելիք Մեջլումը «Գաղտնիք»-ում որպէս հետաքրքիր ու հեռատես, հերոսական ու հայրենասեր պատմական եւ վիպական անհա-

¹ Նոյն տեղում, էջ 132-133:

² Նոյն տեղում, էջ 134:

³ Նոյն տեղում, էջ 129:

տականություն է ներկայացված՝ յուր հռետորական գեղեցիկ խոսքով, տարբեր լեզուների (թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) իմացությամբ:

Գրքում խոսվում է այն մասին, որ ուսումնասիրության պատվիրատուն՝ մեկենասը, եղել է գնդապետ Մելիք Հայկազյանը, որն Աբրահամին Ծակ-քարի կռիվներից սկսած, խորհուրդ է տվել պատմություն ստեղծել, որը, ըստ Աբրահամի, որդուն՝ Ապրեսին տված հանձնարարության համաձայն, «կը լինի մի կարևոր պատմութիւն»¹:

Գնդապետը նաեւ խնդրում է յուր ազգի պատմությունը եւս գրառել ստեղծվելիք գրքում... «Այսու ամենայնիւ գրքիս Ա. հատորի Զ. գլխից սկսեալ՝ մինչեւ ԺԳ. գլուխն (և ԻԲ. գլխից մինչև ԻԸ. գլուխն) որս ծոցի ձեռագիր պատմութեան հետ զգուշութեամբ համեմատելով գրուեցան, որպէս զի ուղիղ լինին և ոչ սխալ: Հայրս իւր ձեռագիր պատմութեան առաջին մասը (այն է՝ գրքիս ԻԲ-ԻԸ գլուխները) ընդօրինակած էր Ներսէս կաթողիկոսի մօտ Գանձասարում ձեռագիր պատմութիւններից. իսկ վերջին մասը (Զ-ԺԳ) հեղինակած էր ինքն ականատես լինելով»², - ընդգծում է Ապրես Բեկնազարյանը: Հայրը՝ Աբրահամ Բեկնազարյանը, որպէս սուրբ պատգամ՝ հայրենակիցներին, ընթերցողներին ուղղված գրքում շարադրում, ընդգծում է հետեւյալը. «Հայաստանի՝ զաւակներ. ինչ որ մենք մեր աչօք տեսանք և մեր ականջօք լսեցինք ականատես և ստուգապատում անձինքներից՝ գրեցինք ձեզ համար. որպէս զի ձեր նախնեաց քաջագործութիւնները կարդալով խրախուսուիք, և նոցա օրինակին հետևող լինելով՝ դուք ևս պաշտպանէք ձեզ յանձնուած Հայ-Ազգը, Հայ-Եկեղեցին.. Ապրես Բեկնազարեանց»³:

Պատմական ճշգրիտ հղումներով բացահայտված են Աղա Մահմեդ շահի կողմից 1795թ. Շուշիի պաշարման ու Իբրահիմին ներկայացված պահանջները: «Գաղտնիք»-ում երեւան են հանված արեւելյան բռնակալի բնավորության գծերը, տիրակալի նպատակները: Այս համապատկերին մեկնված են Բալլուջա եւ Խնածախ գյուղերի քաջերի ծածուկ հարաբերությունները բերդ-ամրոց Շուշիի հետ: Ապա ցույց է տրված շահի սիրալիր վերաբերմունքն Ապրեսի նկատմամբ⁴:

Ապրես Բեկնազարյանը հորը թախանձում է թույլ տալ, որ տեսնի շահին, քանզի շատ հետաքրքիր էր այդ միտքը իրեն թվում: Եվ ականայից հայ զորագնդի՝ շահին խոնարհումից հետո վերջինս տեսնում է Աբրահամի որդուն, իմանում նրա սրտի ցանկությունը, ինքն էլ հավանում է

¹ Նույն տեղում, էջ 141:

² Նույն տեղում, էջ 140-141:

³ Տես նույն տեղում, էջ 141:

⁴ Տես նույն տեղում, էջ 144:

պատանու՛ն եւ որդեգրու՛մ, քանի որ ներքինի լինելով, որդի չուներ: Նրան պատիվներ է տալիս, նշանակում ռոճիկ, անվանափոխում՝ Ալլահվերդի անվանելով: Խանը պայման է դնում, որ Ալլահվերդին յուր հոգեկիր որդին լինելով հանդերձ, պետք է անխախտ պահի յուր պապենական հավատը, լեզուն¹: Յետաքրքիր շահական վեհանձնություն...:

Մելիք Մեջլումը, որի հետ էր նաեւ Գանձակի Ջավադ խանը, պարսից խանին միաժամանակ պատմում է թե՛ վրաց Յերակլ արքայի նենգության եւ թե՛ Ղարաբաղի Իբրահիմ խանի բազում չարագործությունների, շահի հանդեպ նյութած ոճիրների, հայ անհավատարիմ մելիքների կատարած չարագործությունների մասին²:

1783թ. ռուսաց իշխան Գրիգոր Ալեքսանդրովիչը հրաման արձակեց՝ իսպառ ջնջել Ղարաբաղի խանությունը: Իրենցից հետաքրքրություն են ներկայացնում Աղա Մահմեդ շահի կողմից Մելիք Մեջլումին տրված մեծ արտոնություններն ու պայմանները՝ վավերացված պայմանագրի տեսքով՝ շահի կնիքով եւ իսկական ստորագրությամբ³:

Մելիք Մեջլումը նպատակադրվել էր Աղա Մահմեդ շահի հետ միանալով՝ ոչնչացնել Ղարաբաղի խանությունը, մահացու հարվածել նաեւ դավաճան Յերակլ արքային ու անհավատարիմ հայ մելիքներին եւ.. հայրենիքն ազատագրել:

Իսկ Շուշին, անառիկ Շուշին, լուռ էր մի ներքին լռությամբ՝ պարսից ահեղ զորքի ու Աղա Մահմեդ շահի եւ նրանց առաջնորդող Մելիք Մեջլումի, Ջավադ խանի հայացքների ու սպասելիքների առջեւ...

Խրոխտ եւ իմաստուն, քաջակորով էր Մելիք Մեջլումը, որի ջանքերը վասն հայրենյաց՝ վճռական ու անբեկանելի էին: Մի ներքին խորհրդով Մելիք Մեջլումի վարքը, ընդվզումը բազմադեմ թշնամու դեմ հիշեցնում է Սմբատ Բագրատունուն՝ Խոստովանող կոչեցյալ, Աշոտ I իշխանաց իշխանի, Յայոց Բագրատունյաց թագավորության հիմնադրի քաղաքագետ հոր՝ անզուգական ու արիաժին Աշոտ II-ի (Երկաթ մականվանյալ) հերոսական պապի հոր ջանքերը, երբ սպառված տեսնելով հազարաց՝ արաբների դեմ ճակատելու ջանքերը, նրանց առաջնորդեց Յայոց աշխարհի անանցանելի ժայռերով, անդնդախոր ձորերով՝ նրանց խստագույնս կորստյան մատնելով, այս կերպ չափելով յուր խոհեմությունը՝ հատուկ Բագրատունյաց իշխանական տոհմին ու նրա շառավիղներին:

¹ Տես նույն տեղում, էջ 136:

² Տես նույն տեղում, էջ 137:

³ Տես նույն տեղում, էջ 138:

Պատմական աղբյուրներում արաբները կոչվել են այլեայլ անուններով, ինչպես օրինակ, իսմայելացիներ, հագարացիներ, սառակինոսներ, տաճիկներ, մըսրոցիներ: Ըստ Սուրբ գրքի՝ արաբների նախահայրը եղել է Աբրահամը, որի կինը Սառան էր: Նրանք որդի չունեին: Աբրահամը կենակցում է յուր հարճի՝ Յազարի հետ, եւ ծնվում է Իսմայելը: Սակայն Սառան չի ցանկանում ո՛չ նորածնին, ո՛չ էլ Յազարին տեսնել: Աբրահամը վերջիններիս ուղարկում է հեռու տարածքներ, մեծ հողեր է տրամադրում: Նրանք բազմանում են, դառնում անթիվ-անհամար: Ազգն այդ Աբրահամի կնոջ՝ Սառայի անունից կոչվում է սառակինոսներ, հարճի՝ Յազարի անունից՝ հագարացիներ, որդու՝ Իսմայելի անունից՝ իսմայելացիներ: «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ արաբների արքան կոչվել է Մըսրա Մելիք, ժողովուրդը՝ Մըսրա ժողովուրդ, երկիրը՝ Մըսր, որը Եգիպտոսն է: Սուրացանի «Գեւորգ Մարգպետունի» պատմավեպում արաբներն անվանված են նաեւ հագարացիներ եւ այլն: Արաբները մատենագրության մեջ որակված են «հանց չորրորդ գազան»...

Մելիք Մեջլումի խոսքը հայոց քաջերին, որոնք Աղա Մահմեդ շահի զորքերի հետ բացօթյա պաշարել էին Շուշին, հետեւյալն է. «Խնածախցի՛ և Պալլուճեցի՛ քաջեր, փորձառու՛ և հաւատարիմ՝ զօրականներս. շնորհակալութիւն ձեզ, որ մելիքաց բացակայութեանց ժամանակ տղամարդօրէն պաշտպանած էք մեր Յայրենիքը: Շնորհակալութիւն նա և որ մեր հրաւերը ընդունեցիք և եկիք: Ձեր արիւնն կենդանարար ցօղ է Յայրենեաց համար և ձեր քաջութիւնն անառիկ շրջապարիսպ մեր Եկեղեցւոյ և կրօնի համար: Ձեր գործունէութիւնն կեանք է հայ հարազատ-իշխանութեան և ազգութեան և ձեր վերքերով կը բուժուին Յայրենեաց վերքերն: Ժամանակն յդի է, շուտով ծնանելու է ձեր փառաց յաղթանակը, որով կը պսակուին դիւցազնական քաջագործութիւններն»¹:

1795թ. հունիսի 2-12-ը շահի երկու պատգամավորներ անընդհատ դեպի Շուշի ապարդյուն երթեւեկում էին... Շահը Շուշիի դէմ էր ելել 80.000-անոց զորքով...

Մատենագրության, պատմագրության մեջ Շուշիի կարեւորությունը, անառիկությունը, անդրկովկասյան մշակութային երբեմնի կենտրոն լինելը հաստատված է բազմիցս: «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը Շուշիի խրոխտությունը, անզուգականությունն ավելի ընդգծելու համար նշում է. «Շուշին հիմնուած է չորս կողմերից առանձնացած մի բարձրագոյն սարահարթի վերայ: Ամրոցն արևմտեան կողմի լեռներից ան-

¹ Նույն տեղում, էջ 139-140:

ջրպետուած է մի լայնատարած և անդնդախոր ծորով, որի միջով հոսում է բուն Կարկառ գետակն, որն բաժանում է Խաչենը Վարանդից. հարաւային լեռներից անջատուած է բարձրագոյն և վիմահերձ ապառաժներով և նոյնպէս լայնատարած ծորով. արևելեան կողմից բաժանուած է բանակատեղից մի նեղ, խորանդունդ և նոյնպէս վիմահերձ ծորով, որի միջով սահում է Կարկառ գետակի օժանդակն և միանում բուն Կարկառին Մագիկամրջի տակով, իսկ հիւսիսային կողմից, սարահարթի զառ ի վայրն սկսած գծով՝ ամրացած է բրգաշատ, թանձր և բարձրագոյն պարսպով: Շուշու մակերևոյթն զգալի ձևով թեքուած է դէպի արևելեան հիւսիս և իւր երկայնութեան դիրքով ունի երեք ծորակ և վեց լանջ, որոց վերայ շինուած են տուներն: Շուշին կարելի է երեք մասն բաժանել, ստորին, միջին և վերին: Ստորին մասի կիսում բնակում էին մի քանի մահմետական և հայ բնակիչներ, միջին մասում՝ ամբողջ Հայեր, իսկ վերին մասն բոլորովին անմարդաբնակ էր:

Ահա այսպիսի մի սարսափելի, բնութենաստեղծ և անառիկ ամրութեան հետ գործ ունէին Շահն, Մելիքն և Ջաւադ-խանն»¹:

Իսկ եւ իսկ՝ բարձրագահ ու... անմատչելի արծվաբոյն...

Աղա Մահմեդի հրամանով, սկսած հունիսի 15-ից, մեկ ամիս ռմբակոծվեց հա՛ ռմբակոծվեց Շուշին: Տեսարանն անագորոյն էր, սպասելիքը՝ ապարոյուն: Շուշին հնտորեն, հաստատապէս պայքարում էր: Պարսից շահը, որ ամենուր հաղթողի պատվանուն ուներ՝ Ասիա, Եվրոպա, Աֆրիկա, այդժամ հուսաբեկ էր ու անմխիթար:

Շուշիի գրավման շուրջ արված դատողութիւններն անիմաստ էին, անտրամաբանական. «Շուշին ո՛չ պաշարմամբ կը գրաւուի, ո՛չ թնդանօթածգութեամբ, ո՛չ սովով, ո՛չ համբերութեամբ, այլ ի ներքուստ», - եզրահանգում է Աբրահամ Բեկնազարյանը՝ շարունակելով. «Քաջերովս գիշերով գաղտնի կը մտնեն Շուշի, կը բանանք դուռը ներսից և Շահին կը յանձնուի Շուշին ամենայն դիւրութեամբ»²:

Այդ ամենն իրագործելու համար հարկ է, որ շահը հրովարտակով ավելացնի յուր խոստումները՝ վավերացնելով դրանք շահական կնիքով, քանզի նախորդ խաներն անընդհատ ստել են, ուստի ժողովուրդը դադարել է հավատալուց խոստում տվողներին: Շահական հրովարտակով բոլոր մելիքները հաստատվում են յուրյանց նախկին իրավունքների մեջ, եւ բոլոր անօրեն մարմինները զրկվում ունեցած իրավունքներից, բոլոր հողերը՝ աշխարհիկ եւ վանքապատկան, դարձյալ վավերագրվում են իրենց նախկին սահմաններում եւ իրավունքներում:

¹ Նոյն տեղում, էջ 144-145:

² Նոյն տեղում, էջ 147:

Այդ հրովարտակը բավականին ճշգրտորեն բացահայտում է տվյալ ժամանակաշրջանի Ղարաբաղի հայության պատմական, քաղաքական, տնտեսական ծանր կացությունը, որը մահացու էր դարձել օտար մարմնի հայտնվելուց, հայ անօրեն մելիքների անհավատարմությունից եւ քաղաքական երկու ուղղության՝ երկու ճանապարհի պատկանելուց՝ որպես փրկության փարոս¹: Պատմության մեջ առանձին ընդգծված է Գյուլիստանի իշխան Մելիք Աբով Գ-ի եւ Վարանդայի իշխան Մելիք Ջունշուղի կողմից հղված նամակը զորավար Աբրահամ Բեկնազարյանին, որտեղ ցուցված է, թե ինչու մելիքների մի մասը հարել է ոչ թե Մելիք Մեջլումի բռնած ուղղությանը (լինել Պարսկաստանի հովանավորության տակ), այլ Ռուսաց կայսրության հետ դաշնակցելու մտքին²:

Առանձնապես հետաքրքրական է մելիքների նամակը նաեւ այն տեսանկյունից, որ ներկայացնում է հայ շինականի, հայ ժողովրդի տնտեսական ծանր վիճակը, որը հետեւանք էր պատերազմական իրադրության՝ Շուշիի ծանր պաշարման, ժողովրդի ծայրաստիճան անհանգստության եւ սկսված սովի. «Յարգելի՛ գորավար. պարտք համարեցինք յուշ ածել ձեզ մի ամենասոսկալի և մօտալուտ վտանգ, որ համայնաջինջ մահ է սպառնում Արցախի հասարակութեան, որ է համաճարակ սովն: Արցախի արտօրայքն ամբողջապէս մնացած են կանգուն և առանց հնծելու: Հին հացն վերջացած է, իսկ նորը լափում են թշնամի մարդիկ, թռչուն, մուկն, մրջիւն և տօթակէզ արեգակն... Եթէ պաշարումն (Շուշի բերդի) երկարատև կը լինի, կոչնչանայ այդ կիսամեռ յոյսն ևս, այն ժամանակ մեր խեղճ ժողովրդեան վիճակն ի՛նչ կը լինի, երևակայեցէ՛ք-սոսկալի՛ մահ... Ձեր յաղթանակի փառքն այս անգամ թող նսեմանայ Արցախի կենաց առջև և բարձր համբաւն խոնարհի ժողովրդեան ազատութեան առջև: Ժողովրդեան կեանքն նախապատիւ է մասնաւոր փառքից և հասարակութեան մահն՝ մահ Հայրենեաց...

Մենք չենք ասում թէ Հայրենեաց կեանքը վրդովող ճրճերն կենդանի մնան, այլ ազատել ժողովուրդը, որ չպատժուի ճրճերի պատժով և մեղքով... Մենք փորձով գիտենք որ դուք մեզանից շատ բարձր էք ուսմամբ, խոհեմութեամբ, հեռատեսութեամբ, ռազմագիտութեամբ և ազգօգուտ բարեմասնութեամբ: Գիտենք նաև որ ձեր հեռատեսութիւնից բնաւ վրիպած չէ մի կէտն անգամ մեր այս բոլոր գրածներից: Հետևապէս ոչ եթէ մենք երբեմն զձեզ խրատողն, երբեմն աղաչողն, մերթ յորդորողն և մերթ

¹ Տես նույն տեղում, էջ 147-149:

² Տես նույն տեղում, էջ 154-158:

սպառնացողն՝ այլ ժողովրդեան տագնապալի վիճակն, տրոփիւն սրտերն և ձեր վերայ ունեցած անսահման սէրն»¹:

Նամակը գրվեց անհավատարիմ մելիքներից թաքուն... Չեղինակը հաստատում է այն փաստը, որ պատմական երկի համար համառոտագրությունը, ինչպես Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, վնասակար է. «Ահա այս է պատճառն որ մենք, յանձն առնելով տաժանելի նեղութիւն՝ կարգաւ զետեղեցինք և զետեղում ենք սոյն պատմութեան մէջ նամակների պատճենները, ժողովների որոշումները և ժողովրդականաց անունները, որպէս զի յագենան ընթերցողք, ծանօթանան ժամանակի ոգւոյն և, լիուլի գաղափար կազմելով՝ կարողանան անաչառապէս քննադատել սոյն պատմութիւնը և սորա մէջ գործող անձանց արարքները»: Չեղինակը հասկանում է պատմական ամեն մի մանրուք ճիշտ գնահատելու կարելիությունը՝ կարծես թե նախօրոք փորձելով կանխել սխալ գնահատությունը: «Հարկ չկայ ասել թէ միակողմանի գրուած պատմութիւնն կարտադրէ և միակողմանի քննադատութիւն: Անաչառ քննադատն դիւրաւ կարող է շօշափել այն ամեն փաստերը, զորս մենք խոնում ենք իւր շուրջն, և անկողմնակալ վճիռ արձակել»²:

Անշուշտ, այս եւ նման այլ կարգի փաստաթղթերը, նամակները բացում են ժամանակի դեմքը՝ բավական ճշգրիտ արտացոլանքներ հաղորդելով ընթերցողներին:

Իսկ հյուսիսում միաժամանակ անչափ անհանգիստ էին պարսից շահի՝ դեպի Թիֆլիս կատարվելիք արշավանքի լուրերից:

Պատմության մեջ ցույց է տրված, թե ինչ միջոցներով շահի ուշադրությունը շեղեցին, որ առժամանակ թողնի Շուշիի պաշարումը, եւ առաջինը արշավի Թիֆլիսի վրա: Շահի եւ Չերակլի բանակները հանդիպեցին սեպտեմբերի 11-ին. «Պարսկական բանակն մտաւ անպաշտպան Տիֆլիսն, որն շինուած է Կուր գետի աջ եւ ձախ ափերի վերայ»³:

Ճակատամարտն սկսելուն պես Չերակլ արքան եւ Սողոմոնն իրենց թիկնապահներով փախան մինչեւ Կախեթի ամրոց՝ կղերին եւ ժողովրդին թողնելով անտերունջ: Մելիք Ջուռնուդը եւ Ջավադ խանը շահին խնդրեցին, որ քրիստոնյաներին չվնասի...

Չերակլի անտերունջ պալատը փայլում էր շքեղությունից... Ի տարբերություն հայերի՝ Աղա Մահմեդ շահին վրացիները չդիմավորեցին, որից նա գազազել էր: Շահը տրտմեց, բարկացավ, սպառնաց եւ արձակեց սուկալի մահավճիռ, քանի որ Չերակլի փախուստից հետո վրաց մնացած

¹ Սոյն տեղում, էջ 155-158:

² Սոյն տեղում, էջ 158-159:

³ Սոյն տեղում, էջ 163:

գորքը, կղերը, իշխանները, ժողովուրդը վախից ընդառաջ չգնացին նրան: «Վերջապես ներքինի Շահն անդառնալի վճիռ արձակեց կոտորել Վրաց-
ւոց կղերականները և ազնուականները և գումարել ի մի վայր ժողովուր-
դը՝ Պարսկաստան փոխադրելու համար, և միանգամայն հրամայեց աւա-
րի առնել քաղաքի բնակչաց գոյքերը»:

Վրացիները սահմռկած էին, սսկված, սմքած. «Վրացի ազգն ունի նա-
պաստակի երկչոտութիւն և կրիայի դանդաղութիւն». ու... չչարժվեցին
նրանք դէպի չորս կողմ ու մահ ընդունեցին: Շահի հրամանով Կուր գետը
նետեցին ե՛ւ բարձր, ե՛ւ ստորին դասերից շատերին:

Տասն օր անընդհատ տեւեց կողոպուտ, հրդեհ, գերեվարություն: Կուր
գետը արյունով էր ներկվել: Գետի մեջ գտնվողներին սրածեցին, թրատե-
ցին... Շահը զվարճանում էր սոսկալի տեսարանով... «Կիկերոնի ճարտա-
սան գրիչն անգամ անբաւական էր նկարագրել սպանողների աղիողորմ
գոչիւնները, անկելոց թաւալգլոր ցաթկուճները և սոցա մերձաւորաց սու-
զը և կոժը»¹, - պատմագրում է մեկնիչը:

Փողոցներում եւս ժողովուրդն անտերունչ թրատվում էր: Հեղինակը
գովաբանում է վրացիների, կովկասյան ցեղի, մանավանդ, կանանց գե-
ղեցկությունը, որ գերել էր պարսից գորքին:

Հարկավ, վարպետորեն է հյուսված ու ստուգապատում ներկայացված
թե՛ վրացիների գերեվարությունը, թե՛ կողոպուտը, թե՛ Հերակլի շքեղա-
շուք պալատի անշքանալը, թե՛ այնտեղ հավաքած ոսկեղենի, եկեղե-
ցական հարստության, արծաթեղենի անթվարկելի չափը...

Ավա՛ղ, չնայած Մելիք Մեջլումի եւ Ջավադ խանի խնդրանքներին առ
շահն այն մասին, որ հայերին խնայեն, ու չնայած շահի հրամանով այդ
խնդրանքը կարգադրված էր, սակայն «ոչ ինչ պակաս վնասուեցան և
Հայերն թե՛ կոտորած տալով և թե՛ գերի»:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի մեջ առանձին պատմական հետաքրքրու-
թյուն է ներկայացնում նաեւ եռալեզու երգիչ, երգահան, նվագածու, հան-
ճարեղ տաղերգու-աշուղ Սայաթ-Նովայի (Հարություն Սայադյան) մասին
մեկնությունը, որը Գեւորգ Ախվերդյանի համապատասխան քննական
մեկնությունից ավելի վաղ անչափ կարեւորություն է ձեռք բերում թե՛ բա-
նաստեղծի վարպետության ու տաղանդի, թե՛ նրա գրական մականվան,
թե՛ մահվան եւ այլ կարեւոր հարցերի բացահայտման ուղղությամբ. «Հայ
սպանուածների մէջ հայ քաջերի ուշադրութիւնը գրաւեց Յարութիւն վար-
դապետն», որի «հայր Մահտեսին Հալապ քաղաքից գաղթում է Տփիսիս,

¹ Նույն տեղում, էջ 165, 166:

ուր անուսնանում է Հալուապար թաղում մի դստեր հետ, որից ծնունդ է Յարութին անուամբ մի որդի...»:

Մեծ հայրորդին պատմագրի կողմից անվանված է «ակնաւոր բանաստեղծ, ազգային քաղցրաբարբառ երգիչ», իսկ Սայաթ-Նովան, ըստ պատմության մեկնության, «նշանակում է նոր-որսորդ... Սա (բանաստեղծը) այդ օրերում գտնուելով Տփխիսում, մտնում է բերդի եկեղեցին աղօթելու. հասնում են անիծեալ սարվազներն և ստիպում են ուրանալ Քրիստոսի լոյս հաւատը, դուրս գալ եկեղեցուց և ընդունել Մահմէտի կրօնը: Սակայն Սայեաթնովա Յարութին վարդապետն սարվազներից թրերով նահատակում է եկեղեցունն այս խօսքերը արտասանելով».

«Չղխմանամ քիլիսատան,

Տէօնմանամ Իսատան»

(«Եկեղեցուց դուրս չեն գար,

Քրիստոսը չեն ուրանար»)՝¹:

Հիշատակելի է այն փաստը, որ հայ քաջերից թոփուզ Աշուղ Ղարան եւ Նեառաատովը, Պել-ճամալը, վրեժխնդիր լինելով հայ հանճարի մահվան համար, սրի են քաշում 259 սարվազ-պարսիկ զինվոր: Թոփուզ Աշուղ-Ղարան մի քանի հայ քահանաների հետ «բերդի եկեղեցույ գավթում ամփոփել տուաւ նահատակ Սայեաթնովա բանաստեղծ Յարութին վարդապետի մարմինը»²:

Մեջբերված է նաեւ մեկ բանաստեղծություն («Արի՛, ինձ ականջ կալ, այ դիվանայ սիրտ»³) Սայաթ-Նովայից:

Պատմական այս հիշատակությունները հիանալի եւ արժեքավոր հայագիտական տեղեկություններ են սերունդներին հղված՝ հանճարաշունչ բանաստեղծի վերաբերյալ:

Հրդեհելով Հերակլի պալատը՝ 70.000 վրացի եւ հայ գերիներով, անթիվ գանձերով, շահը շտապով թողնում է Թիֆլիսը՝ ձգտելով չպատերազմել ռուսների կողմից սպասվող զորքերի դեմ:

Մելիք Մեջլումի ջանքերով ու միջնորդությամբ Սողանլուից Թիֆլիս են վերադառնում 12.000 հայ եւ վրացի գերիներ՝ իրենց հարստությամբ: Մելիք Մեջլումը մի պախարակելի նամակ հղեց անագնիվ Հերակլին՝ պատռելով դավաճանի նրա դիմակը: Նամակը բացում է Արցախի ազատությունը, զորությունը քանդող Իբրահիմի եւ նրան գործակցող Հերակլի դիմակը, Արցախի քաղաքական շահերը շահարկող թշնամի ուժերի դիմակը. «Անագնիւ իշխան. դու գուն գործեցիր Իբրահիմ ճըռ-խանի ձեռքն

¹ Նույն տեղում, էջ 166-167:

² Նույն տեղում, էջ 168, 169:

³ Տես նույն տեղում, էջ 168-169:

մատնել Վրաստան օգնութեան դիմած երկու հայ ազատ մելիքները: Մելիք-Մեժլումը Շահի գերութիւնից ազատեց քո տասն և երկու հազար գերիները և եկեղեցեացոյ թանգակին սպասները: Իշխան, Տփխիսի կործանման պատճառը և Պարսկաստան գերի գնացող ժողովրդեան մեղքը քո մեղաց մէջ որոնէ և ո՛չ Մելիք-Մեժլումի անմեղութեան մէջ»¹:

Մելիք Մեջլումի ջանքերն, անշուշտ, ուղղված էին Ղարաբաղի խանութեան ոչնչացմանը: Նա ճշմարիտ էր գտնում պարսից շահի հետ համագործակցելը, քան ռուսներին անօգուտ սպասելը: Շահը Մեջլումին դառնալով՝ ասում է. «Ահաւասիկ, ձեր թշնամեաց մին պատժեցինք. կերթանք պատժել և միւսը, Ջառչի-Փանահի տղան իւր անուանած բոլոր ճրճերով, բայց չարաչար մահուան պատիժներով»: Իրարից գոհ էին երկուսն էլ. «...Յերակլն թերևս միայն մեղանչած էր իմ անձի դէմ, իսկ Իբրահիմ ճըռ-խանն հանդերձ իւր ճրճերով մեղանչած է ամբողջ Պարսկաստանի և Սիւնեաց դէմ», - նկատում է մելիքը: «Այո, ծանր յանցաւորներն կը պատժուին և ծանր պատիժներով»², - ավելացրեց շահը:

Շահը Մելիք Մեջլումին պարգեւատրում է առյուծադրոջ մեղալով եւ ոսկով ու արծաթով, նույնչափ ոսկով ու արծաթով՝ Ջավադ խանին: Պարգեւատրվեցին հայոց քաջերը եւ զորքը: Ցավոք, շահը Պարսկաստանում ծագած խռովութեան պատճառով շտապեց ու ցանկացավ յուր հետ վերցնել նաեւ Աբրահամ Բեկնազարյանին եւ նրա որդուն՝ Ապրեսիմ:

Գեղեցիկ ու հասու մեկնութիւններով, ինչպէս պատմութիւնում է նշված՝ «Բնութեան հիանալի կարկինն Արցախը երկու մասի բաժանած էլեռ և դաշտ»³:

Պատմական հետաքրքիր հղում է արված Արցախի արեւելյան մասում փռված բերրի, ընդարձակ հրաշք դաշտի վերաբերյալ. «Ամբողջ դաշտն ոռոգանում է Արցախի, Գանձակի գետերով և Երասխից վեր առած Արքայառուի ջրերով: Արքայառուն սկզբում շինած է Վաչագան Գ. թագաւորն, որի պատճառաւ անուանուած է «Արքայառու». որը յետոյ նորա քոյր Խաթունն նորոգել տուած է, վասնորոյ և կոչուած է «Խաթունարիս»: Այս եւ այլ հիանալի կտորները բանահյուսական, քնարական, պատմական անգին ավանդութիւններ են, ասացումներ, որոնք մեր անգուգական հայրենիքի պատմավիպական դիմագիծն են վերհանում՝ մեր հիշողութեան վարքամատյանի հերոսական էջերը ներկայացնելով: «Ամբողջ Մեծ և Փոքր Սիւնիքն կազմում են Աղուանից երկրի արևմտեան մասն», - պատմագրված է «Գաղտնիք Ղարաբաղի»-ում: Մեկ այլ պատմական ավան-

¹ Նույն տեղում, էջ 170:

² Բեկնազարեանց Ա., էջ 170:

³ Նույն տեղում, էջ 173:

դուքամբ ասվում է. «Ձալալ-Դոլուն աւետիս են տալիս, ասելով. «Կնեկդ խոխան բերալ ա» (կինդ երեխայ ծնած է): Իշխանն ի պատիւ երախային «Խոխանաբերդ» է անուանում այս բերդը: Երեմիա կաթողիկոսն «Յուլուպապ» է կոչում Ս. Գեորգի մօտի բերդը ի պատիւ իւր հեգահոգի և հլու պապին, որն յետոյ կոչւում է «Ուլուպապ»¹:

Ապա պատմական եւ աշխարհագրական լանդշաֆտն ընդգծելով՝ պատմագիրը քննում է Խամսայի (արաբ.- հինգի) մելիքություններն իրենց նկարագրերով, մելիքության կենտրոններով, սար ու ձորերով, սրբատեղիներով, վանքերով, մելիքական տների մեկնաբանմամբ, գետերով, սահմաններով: Նշված են պատվական հանքատեսակները, սուրբ եւ անսուրբ չորքոտանիները, թռչունները, ապա՝ հավատի առաջին նահատակները... Ցույց են տրված Աղվանից երկրի նահապետներն ու թագավորական տները, նախարարական, իշխանական, մելիքական կարգերը...

Ներկայացված են թագավորական, իշխանական, կաթողիկոսական, մելիքական դինաստիաներն ու նրանց հաջորդները, ի պաշտոնն ունեցած արտոնությունները²:

Պատմագիրը՝ Ապրես Բեկնազարյանը, ԻԳ գլխում ձգտելով մաս-մաս ընդհանրացնել Արցախի մելիքական տների պատմությունը ու քանի որ այն ներկայացրել է Աղվանից թագավորության «փառաւոր անցեալը, տխուր ներկան և ամենատխուր ապագայն», ուստի նա փաստում է, որ «հարկ է նախ սկսիլ այդ շղթայի առաջին օղակից և կարգաւ շօշափել այդ օղակները մինչև վերջին մելիքն: Եւ այս ամենը,- եզրակացնում է պատմագիրը,- ընդօրինակում ենք հօրս ծոցի ձեռագրիցն, որն արտագրուած է «Աղուանից պատմութիւն» ձեռագրից և մեր կանխաւ յիշած ձեռագրերից»³:

Հարկավ, մելիքական տան ժառանգ Մելիք Միրզայի որդին՝ Րաֆֆին, որ «Խամսայի մելքությունները» ուսումնասիրությունը յուր ստեղծագործության պսակն էր ընդունում, չէր կարող հանդուրժել ո՛չ «Գաղտնիք Ղարաբաղի» երկի հեղինակային իրավունքը կրողին, ո՛չ էլ նրա թարգմանչին:

Ցավալի է, բայց մեր սիրելի ու հարգարժան գրողը հիմնահատակ է արել գրվածքը, վարկաբեկել հեղինակ ու թարգմանիչ ներկայացողներին... Կարիք չկար այդ կերպ մոտենալ հարցին, քանի որ վերոնշյալ գիրքը, իրավ, իրենից պատմական արժեք ներկայացնում է:

¹ Նույն տեղում, էջ 174-176:

² Բէկնազարեանց Ա., էջ 172-176, 188:

³ Նույն տեղում, էջ 177:

Այսպիսով, որպես գծագիր ներկայացնելով Արցախ աշխարհն ընդգրկող սահմանները, պատմագիրը թվարկում է նրա ունեցած օգտակար հանածոները եւս, հնուց եկող կառավարման, պապերի ունեցած իրավունքների, հոգեւոր եւ աշխարհիկ մարմինների գոյության ձեւերը, թագավորական տների հաջորդական կարգը, կաթողիկոսական տան իրավահաջորդական ընթացքը, բուն Աղվանից թագավորական տան մեջ մտնող թագավորների թվարկումը, մելիքական (մելիք-արաբ.՝ թագավոր) տներն ու մելիքների շղթան, նրանց երկրները, ունեցած պաշտոնները, վարած կռիվները, իրար եւ օտարների միջեւ ունեցած հարաբերությունները, ցուցաբերած հերոսականության գծերը, խառնվածքային շերտերը:

Մելիքական ճյուղերը ներկայացված են հորից որդի: Այս ձեւույթներն էլ է Րաֆֆին խիստ քննադատել, ցույց տվել, թե արտագրություններ են դրանք եւ այլն, եւ այլն: Սակայն ով ով՝ բայց Րաֆֆին գիտե, որ մեր պատմիչներից շատերն ընդօրինակել են հին աղբյուրները, նրանց մեջ եղած կարեւոր պատմական փաստերը՝ հաճախ հետագայում աղբյուրների կորստի դեպքում դառնալով սկզբնաղբյուր:

Թվարկված են նաեւ հեթանոս եւ քրիստոնյա նախարարական տները՝ հերթականությամբ, ժամանակի հայելու ներքո¹:

Թարգմանիչը ծանոթագրություններում նշում է, որ որոշ տեղեկությունների համար Բեկնազարյանը աղբյուրներ է ընդունել նաեւ Սովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Մատթեոս Ուռնայեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Վանականի եւ մյուս պատմիչների երկասիրությունները՝ նշելով, որ յուր ձեռքում եղած որոշ պատմական փաստաթղթեր, արձանագրություններ եւս ըստ հարկի մտցրել է ծանոթագրությունների մեջ²:

Այս կարգը նշմարվում է մնացած գլուխներում եւս:

КНИГА АПРЕСА БЕКНАЗАРЯНА И ПОЛИТИЧЕСКАЯ СУДЬБА
КАРАБАХА В КОНЦЕ XVIII – НАЧАЛЕ XIX ВЕКОВ.
(НАЧАЛО В ПРЕДЫДУЩЕМ НОМЕРЕ N 1, 2010)).

Зинаида Аракелян-Балаян

Резюме

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, которые прив-

¹ *Բէկնազարեանց Ա.*, էջ 177-178:

² *Տե՛ս նույն տեղում*, էջ 184-186:

леккли внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с габара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела–ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна А. “Таїна Карабах”.

В ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование “Таїна Карабах” содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха – объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале XIX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими, художественно-литературными, и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание.

APRES BEKNAZARYAN’S “SECRET OF KARABAKH”
AND THE POLITICAL FATE OF KARABAKH AT THE END OF XVIII AND
IN THE BEGINNING OF XIX CENTURIES.

(the beginning is in the previous issue (N 1, 2010)

Zinaida Arakelyan-Balayan
Summary

In the history of Armenian literature and periodicals there were debatable phenomena which became the focus of certain literary, critical and publicistic circles.

Après Begnazaryan`s historical investigation “Mystery of Karabagh” (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published under the patronage of Arakel-aga Tsaturyan in St. Petersburg in 1886.

But detailed analysis of this work has brought us to the conclusion that “Mystery of Karabagh” contains diverse historical documents concerning the periods of Artsakh peoples` struggle against Persian invasions in the XIX and in the beginning of the XX centuries; historical, and other interpretations of Russian-Armenian-Artsakh relationships; opens and elucidates the development of the scientific thought in Artsakh.

Thus, the material under investigation provides a modern and scientific view point.

«ՋՐԱԲԵՐՂ» ԱՄՐՈՑԸ

Սլավա Սարգսյան

ԼՂԴ

Հնուց ի վեր Թարթառի հովիտը եւ այն շրջափակող անտառապատ ու բարձրաբերձ լեռնալանջերը (Մռավ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի եւ Թարթառ գետերի ձախ եւ Կուրակ գետակի աջ ափերի մեջ)¹ կազմել են Արցախ նահանգի Մեծկուենք (Մեծկողմանք) գավառը:

Հնագիտական հետազոտությունները վկայում են, որ մարդն այստեղ ապրել ու ստեղծագործել է հնագույն ժամանակներից: Այն Հայաստանի ամենախիտ բնակեցված վայրերից էր: Հայտնի է նաեւ, որ հետագայում, մասնավորապես արաբական տիրապետության ընթացքում, Մեծկուենքը ընդգրկվում է առեւտրական ակտիվ գործառնության ոլորտի մեջ եւ Դվին-Պարտավ տարանցիկ առեւտրական ճանապարհով, որի վրա ստեղծվել էին մի շարք կայաններ, այդ թվում Հաթերքի եւ Կաղանկատույքի կայանները², կապվում էր Հայաստանի կենտրոնական շրջաններին:

Գավառի պաշտպանությունը կազմակերպվում էր մի շարք հենակետերի միջոցով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ջրաբերող՝ միջնադարյան Հայաստանի ամենահզոր ամրոցներից մեկը:

Ջրաբերողը լիակատար եւ համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել: Ամրոցի մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերում է Խաչեն ներխուժած խազարների 620-ական թվականների վերջերի ասպատակություններին եւ դրանց դեմ Աղվանից կաթողիկոս Վիրոյի ձեռնարկած միջոցառումներին, որի մասին հաղորդում է Մ. Կաղանկատվա-

¹ Բարխուտարեանց Ս., Արցախ, Բագու, 1895, էջ 24:

² Մանանդյան Դ. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեյտլինգերյան քարտեզի, Երեւան, 1936, էջ 202: